ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող 014 մասնագիտական խորհուրդ Արմինե Էդվարդի Մեժլումյանի «Կառավարչական հաշվառման հիմնախնդիրները կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգում (Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի նյութերով)» թեմայով Ը.00.03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը

Արմինե Էդվարդի Մեժլումյանի ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության ագրոպարենային կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգում կառավարչական հաշվառման հիմնախնդիրների հետազոտությանը և դրանց վերաբերյալ արդյունավետ լուծման ուղիների առաջարկմանը: Ագրոպարենային համակարգի կազմակերպությունները հաճախ հանդես են գալիս արտադրության շղթայական փոխկապակցվածությամբ և անհրաժեշտություն է առաջանում գնահատելու յուրաքանչյուր արտադրական օղակի ներդրումն այդ շղթայում ձևավորվող ֆինանսական արդյունքներում՝ վերահսկողության թիրախային ուղղությունները բացահայտելու և արդյունավետ կառավարչական որոշումներ կայացնելու համար:

Ուստի, իրականացվող տնտեսական բարեփոխումներին համահունչ կարևորվում է կառավարչական հաշվառման միջոցով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքերի համակարգումն ու արժևորումը, տնտեսավարման ոչ արդյունավետ օղակների բացահայտումը, ինչպես նաև պատասխանատվության կենտրոնների և կոնկրետ շահառուների միջև հետադարձ կապի սահմանումը:

Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվառման խնդիրների վերաբերյալ, առավել ևս այդ ցուցանիշների արձանագրմանը, համակարգմանը և հաշվառմանը հաշվապահական հաշիվներով, նոր լուծումները մեծապես կարող են նպաստել ներքին վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու կառավարչական հաշվառման հաշվետվողականության համակարգ, որն առնչվում է սոցիալական գործարարության, բնապահպանական գործունեության, կորպորատիվ շահերի

բավարարվածության, աշխատողների իրավունքների և առողջության պաշտպանության ոլորտների հետ:

Բերված փաստարկներով ատենախոսը հիմնավորել է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է հետազոտել ՀՀ ագրոպարենային ոլորտում գործող կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների կառավարչական հաշվառման հիմնախնդիրները և մշակել ու ներկայացնել մոտեցումներ՝ ներքին վերահսկողության բարելավման ու կառավարչական արդյունավետ որոշումների կայացման համար: Դրված նպատակի իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որն էլ թելադրում է ատենախոսության տրամաբանությունն ու կառուցվածքը: Այդ առումով աշխատանքում խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել և վերլուծել կառավարչական հաշվառման տեսամեթոդական հիմքերը և գործառույթների շրջանակը ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում,
- հետազոտել ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվետվողականության միջազգային փորձը և ժամանակակից մոտեցումները,
- բացահայտել և հիմնավորել կառավարչական հաշվառման վերահսկողական գործառույթների ընդլայնման թիրախային ուղղությունները,
- մշակել ներտնտեսական կառավարչական հաշվառման մոտեցում, որի օգնությամբ բարելավել նախահաշվային ու փաստացի ցուցանիշների շեղումների վերահսկողությունը,
- մշակել և ներկայացնել փոխկապակցված կազմակերպություններում կառավարչական ներխմբային հաշվառման մոտեցում, որի օգնությամբ բարելավել ֆինանսական արդյունքների վերահսկողությունը,
- մշակել, ներկայացնել և հիմնավորել կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվառման և հաշվետվողականության մոտեցումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտ է ՀՀ ագրոպարենային համակարգը, մասնավորապես՝ գյուղատնտեսական հումքը վերամշակող կազմակերպությունները, իսկ առարկան՝ այդ կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունքների կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության բարելավման հիմնախնդիրները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում կատարված հետազոտությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ ներկայացվել են հետևյալ դրույթները.

- մշակվել է կառավարչական հաշվառման մոտեցում՝ հիմնված ներտնտեսական պատասխանատվության կենտրոններում ծախսումների գնահատման, վերլուծության և համապատասխան հաշիվների ու հաշվետվությունների ցուցանիշների կիրառության վրա, նպատակ ունենալով բարելավել նախահաշվային ու փաստացի ցուցանիշների շեղումների հաշվառումն ու վերահսկողությունը,
- տեսական և գործնական տեսանկյուններից հիմնավորվել է փոխկապակցված կազմակերպություններում կառավարչական ներխմբային հաշվառման մոտեցում՝ յուրաքանչյուր կազմակերպություն դիտարկելով որպես եկամուտների ձևավորման առանձին պատասխանատվության կենտրոն, որն ուղղված է խմբի ֆինանսական արդյունքների վերահսկողության բարելավմանը,
- մշակվել և առաջարկվել է կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման մոտեցում՝ ուղղված ոչ ֆինանսական հաշվետվությունների դերի բարձրացմանը և ներքին վերահսկողության տեղեկատվական ապահովվածության բարելավմանը:

Հետազոտության գիտական արդյունքների հավաստիությունը և գործնական նշանակությունը

Ա. Է. Մեժլումյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է ՀՀ ագրոպարենային ոլորտի կազմակերպություններում իրականացվող կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության զարգացման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված կառավարչական հաշվառման ու ներքին վերահսկողության բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, հեղինակի կատարած առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ ագրոպարենային ոլորտում իրականացվող կառավարչական հաշվառման գործառույթներում՝ նպաստելով կազմակերպությունների ներքին վերահսկողության գործիքակազմի բարելավմանը, ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքերի ձևավորման գործընթացի արդյունավետության գնահատմանը, տնտեսական գործունեության մրցակցային ոլորտում կառավարչական որոշումների բարելավմանը:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլվել են հեղինակի 9 հրապարակումներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության գլխավոր նպատակը և խնդիրները, ներկայացվել են հիմնական գիտական արդյունքները և դրանց գործնական նշանակությունը, տրվել են ատենախոսության տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:

Առաջին՝ ***«Ագրոպարենային համակարգի կազմակերպություններում կառավարչական հաշվառման տեսամեթոդական հիմքերը»*** գլխում կատարվել է

ՀՀ ագրոպարենային համակարգում կառավարչական հաշվառման զարգացման վերլուծություն, ուսումնասիրվել է կառավարչական հաշվառման գործառույթների շրջանակը ագրոպարենային համակարգի կազմակերպություններում, ինչպես նաև ոչ ֆինանսական տեղեկատվության կառավարչական հաշվետվողականության միջազգային փորձը և ժամանակակից մոտեցումները:

Երկրորդ՝ ***«Կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության փոխառնչությունը»*** գլխում բացահայտվել են կառավարչական հաշվառման համակարգում ներքին վերահսկողության կարգավորման հիմնախնդիրները, հիմնավորվել են կառավարչական հաշվառման վերահսկողական գործառույթների ընդլայնման թիրախային ուղղությունները:

Երրորդ՝ ***«Կառավարչական հաշվառման և ներքին վերահսկողության բարելավմանուղիները»*** գլխում ներքին վերահսկողության բարելավման նպատակով մշակվել, հիմնավորվել և ներկայացվել են կառավարչական հաշվառման նոր մոտեցումներ:

Եզրակացություններ բաժնում ներկայացվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերի ուսումնասիրությունից բխող եզրահանգումներ, ներկայացվել են վերլուծությամբ հիմնավորված առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Թվարկված առավելությունների հետ մեկտեղ թեկնածուական ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից և բացթողումներից: Դրանցից նշենք հետևյալները.

1. Ատենախոսության տեսամեթոդաբանական հարցերի շրջանակներում ատենախոսը 1.1 «Ագրոպարենային համակարգում կառավարչական հաշվառման զարգացման վերլուծությունը»՝ ենթահարցում կարևորել է կառավարչական հաշվառման անհրաժեշտությունը, շեշտելով վերջինիս առավելությունները: Մեր կարծիքով, տեսագործնական առումով, նպատակահարմար էր, որպեսզի քննարկվածի համատեքստում տրվեր կառավարչական հաշվառման հեղինակային սահմանում:

2. Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված դրույթը՝ «...տեսական և գործնական տեսանկյուններից հիմնավորվել է փոխկապակցված կազմակերպություններում կառավարչական ներխմբային հաշվառման մոտեցում՝ յուրաքանչյուր կազմակերպություն դիտարկելով որպես եկամուտների ձևավորման առանձին պատասխանատվության կենտրոն, որն ուղղված է խմբի ֆինանսական արդյունքների վերահսկողության բարելավմանը...» առավել կշահեր, եթե յուրաքանչյուր կազմակերպություն դիտարկվեր նաև որպես ծախսերի ձևավորման առանձին պատասխանատվության կենտրոն: Տվյա դեպքում, մեր կարծիքով, ֆինանսական արդյունքների վերահսկողության առաջարկվող մոտեցումը առավել ամբողջական կլիներ:

3. Ատենախոսությունում որպես գիտական նորույթ ներկայացված դրույթը՝ «...մշակվել և առաջարկվել է կազմակերպությունների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների կառավարչական հաշվառման մոտեցում՝ ուղղված ոչ ֆինանսական հաշվետվությունների դերի բարձրացմանը և ներքին վերահսկողության տեղեկատվական ապահովվածության բարելավմանը...» առավել կշահեր, եթե շեշտադրվեին ներքին վերահսկողության տեղեկատվական ապահովվածության բարելավման տեսանկյունից առավել էական գործիքները (էջ 36):

4. Ատենախոսության էջ 98-ում հեղինակն առաջարկել է պայմանական ցուցանիշներով «Ոչ ֆինանսական հաշվետվության» ձևաչափ, ինչը կարծում ենք կիրառական տեսանկյունից իր նպատակահարմարությունը խիստ կհիմնավորեր, եթե հիմնվեր ագրոպարենային համակարգի կոնկրետ խումբ կազմակերպությունների իրական ցուցանիշների վրա: Բացի դրանից, մեր կարծիքով, ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում ոչ ֆինանսկան հաշվետվության տեղայանցնելը լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի՝ հաշվետվությունում ներկայացված հարցերի ընտրության մեխանիզմի և փորձագետների գնահատման մեթոդաբանության տեսակետներից:

5. Ատենախոսության էջ 66-ում հեղինակը ներկայացրել է ագրոպարենային համակարգում կառավարչական հաշվառման վերահսկողության գործառույթների նպատակադրումները, ինչը կարծում ենք առավել ամբողջական բնույթ կկրեր, եթե

կոնկրետ մի քանի կազմակերպությունների համար մշակվեին տիպային օրինակներ կառավարչական հաշվառման գործառույթների ընդլայնման ու բարելավման տեսանկյունից ևս:

6. Աշխատաքում հեղինակը վերլուծության նպատակով սահմանափակվել է մինչև 2018թ. տվյալներով (բացառությամբ «Գրանդ հոլդինգ» կազմակերպության վերաբերյալ տեղեկատվության 2019 թ. հոկտեմբեր), այնինչ խիստ կարևոր էր ներառել նաև 2019 և 2020թթ. հասանելի տեղեկատվությունը ևս, քանի որ համավարակով պայմանավորված ագրոպարենային համակարգի կազմակերպություններում ներքին վերահսկողության համակարգում առաջ եկան կառավարչական հաշվառման տարաբնույթ նոր հիմնախնդիրներ՝ կապված էլեկտրոնային կառավարման հետ, որոնց վերաբերյալ արդյունավետ լուծումները ժամանակի հրամայականն է:

Նշված դիտողությունները, կարծում ենք, էապես չեն ազդում ատենախոսության գիտական մակարդակի և գործնական նշանակության ընդհանուր գնահատականի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով շարադրվածը, կարելի է հավաստել, որ ատենախոս Ա. Է. Մեժլումյանը կատարել է արդիական, ուշագրավ, ծավալուն, տեսամեթոդական և կիրառական բնույթի հետազոտություն: Այն կարելի է որակել, որպես ինքնուրույն և պատշաճ մակարդակով կատարված գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ ագրարային ոլորտի հաշվառման և վերլուծության տեսական և գործնական կարևոր խնդիրներ և ձևավորվել են գիտական նորովի արդյունքներ:

Սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական 9 հոդվածներում, որպես գիտական նորույթ ներկայացված դրույթները ստացել են իրենց լուսաբանումը:

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ **Ա. Է. Մեժլումյանի «Կառավարչական հաշվառման հիմնախնդիրները կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգում (Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի նյութերով)»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բավարարում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություններին «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» 6-րդ և 7-րդ կետերի և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ **Արմինե Էդվարդի Մեժլումյանը** արժանի է տնտեսագիտության թեկանծուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ա.Վ.Մաթևոսյան**

28.10.2020թ.

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ. Մաթևոսյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտ.քարտուղար **Ն.Հ.Դարբինյան**